

բան մը, որ կտրականապէս կը ժխտէին ոուս մարքսիստները, նկատելով զիւզացիութիւնը իրրեւ յետադէմ դասակարգ:

Եւ հայ մտաւորականներու մեծ մասը, որ դուրս էր եկած զիւզէն, բնականաբար հակում ունէր զէպի զերազանցապէս զիւզացիական ոուս կուսակցութիւնը:

Ատկէ զատ ոուս սոցիալիստ-յեղափոխականները անհատին եւ գործօն փոքրամասնութեան մեծ զեր կը վերապահէին պատմութեան մէջ եւ այդ պատճառով ալ կ'ընդունէին անհատական տեւորներու խոշոր կարեւորութիւնը քաղաքական գործունէութեան մէջ: Հայը, որ իր ազգային նկարագրով անհատապաշտ է, բնական հակում մը ունէր զէպի ոուս սոցիալիստ-յեղափոխականը:

Վերջապէս որոշ ազդեցութիւն ունէր նաեւ այն պարագան, որ Հ. Յ. Գալանկցութեան մէջ կամ անոր շուրջը կը գտնուէր հայկական գաղութային խոշոր կեդրոններու հայ պուրժուազիայի ազատական տարրը, իսկ այդ տարրը հարկաւ չէր կարող առանձին սէր մը տածել զէպի զուտ բանաւորական շահեր ու գաղափարներ պաշտպանող մարքսիստական կուսակցութիւնները, սոցիալ-դեմոկրատները:

Ճիշդ է, Հ. Յ. Գալանկցութեան մէջ կային նաեւ մարքսիստական մտայնութիւն եւ հակումներ ունեցող անհատներ եւս, ինչպէս, օրինակ, Ռոստոմը, սակայն զերիշխող էր մղումը զէպի սոցիալիստ-յեղափոխական հոսանքը:

Եւ այսպէս աննկատելի կերպով մեր կուսակցութեան ծոցին մէջ ոուս սոցիալիստ-յեղափոխականներու գաղափարները արմատ ձգեցին, բաւականին ընդարձակ գետին նուաճեցին: Եւ ընկերվարական հովերով տարուած ոուսահայ երիտասարդութեան ուժգին ճընշման տակ Հ. Յ. Գալանկցութիւնը 1907 թուին Վիեննայի ընդհանուր ժողովին մէջ վերջնականապէս ձեւակերպեց ու նուիրագործեց սոցիալիստ-յեղափոխական այն ծրագիրը, որ գոյութիւն ունի մինչեւ այսօր ալ:

III

ՊԱՅՔԱՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ԵՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Սակայն մինչեւ Վիեննայի ընդհանուր ժողովին գումարումը՝ Հ. Յ. Գալանկցութեան մէջ եւ անոր շուրջը ծայր էր տուած թէ՛ ձայնէն եւ թէ՛ աջէն բաւականին զօրաւոր պայքար մը կուսակցութեան տիրող հոսանքին դէմ:

Չախէն կը գործէին այսպէս կոչուած «անջատականները», որոնք կ'ըսէին, թէ Հ. Յ. Գալանկցութիւնը ընկերվարական կուսակցութիւն չէ եւ չի ալ կրնայ լինել, թէ սոցիալիստական բիւրեղացման փորձերը զբական արդիւնք չպիտի տան եւ միայն պիտի «մթացնեն հայ աշխատաւորութեան դասակարգային զիտակցութիւնը», թէ Հ. Յ. Գալանկցութիւնը զերազանցապէս տաճկա-հայկական կազմակերպութիւն է եւ, իրրեւ այդպիսին, չի կարող լինել ընկերվարական, քանի որ Տաճկահայաստանի մէջ չի կան սոցիալիստական գործունէութեան նախապայմաններ: Այս բոլորը նկատի ունենալով, անջատականները կ'ըսէին, թէ պէտք է Կովկասի մէջ անջատուիլ Հ. Յ. Գալանկցութեանէն եւ ստեղծել մէկ նոր հայկական կուսակցութիւն, կապուելով ոուս սոցիալիստ յեղափոխական կազմակերպութեան հետ:

Անջատականները, առանց նոյնիսկ սպասելու Վիեննայի ընդհանուր ժողովի որոշումներուն, բժ. Աթաբէկեանի գլխաւորութեամբ, դուրս եկան Հ. Յ. Գալանկցութեան շարքերէն եւ առեն մը, իրրեւ ուրոյն կազմակերպութիւն իրենց գոյութիւնը պահպանելէ վերջը, միացան ոուս սոցիալիստ-յեղափոխականներուն: Այս միացումը իրապէս եղաւ ինքնազգոքացման համազօր քայլ մը, հայ սոցիալիստ-յեղափոխականներու կողմէն: Բնական է, որ այլեւս անոնք չէին կարող նշանակելի զեր մը կատարել հայ քաղաքական կեանքին մէջ:

Սոցիալիզմի շուրջը Հ. Յ. Գալանկցութեան մէջ եղած պայքարը 1906 թ. աջէն եւս առաջ բերաւ հակահոսանք մը, որ յայտնի դարձաւ միհրանական շարժում անունով: